ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԸ*

1. Որակավորման քննությունները գիտական աստիճանաշնորհման անբաժանելի մասն են, որոնց նպատակը հայցորդի՝ որպես ապագա գիտնականի մասնագիտական պատրաստվածության ստուգումն է:

Սահմանվում են որակավորման քննություններ մասնագիտությունից, փիլիսոփայությունից և օտար լեզվից, ինչպես նաև ստուգարք՝ ինֆորմատիկայից:

Որակավորման քննություններ հանձնում են այն անձինք, ովքեր ունեն բարձրագույն կրթության որակավորման հետևյալ աստիճանները՝ դիպլոմավորված մասնագետ և մագիստրոս: Քննությունը մասնագիտությունից հանձնվում է ատենախոսության թեմայի հաստատումից հետո:

2. Մասնագիտությունից քննությունը հանձնվում է այն գիտական հիմնարկներում, կազմակերպություններում և բուհերում (այսուհետև՝ հիմնարկներ), որոնք ունեն ԲՈՀ-ի թույլտվությունը:

Հիմնարկը ԲՈՀ է ներկայացնում մասնագիտական քննություն ընդունող հանձնաժողովի կազմը՝ հաստատման համար:

Հանձնաժողովը հաստատվում է հետևյալ կազմով՝ նախագահ (գիտու- թյան դոկտոր) և 2-4 անդամներ (գիտության դոկտոր և թեկնածու): Մեկ անձը կարող է լինել միայն մեկ հանձնաժողովի անդամ: Հանձնաժողովում կարող են ընդգրկվել գիտնականներ նաև այլ հիմնարկներից:

Քննությունը հանձնվում է այն մասնագիտությունից, որով հաստատվել է ատենախոսության թեման՝ ԲՈՀ-ի հաստատած ծրագրով:

Անհրաժեշտության դեպքում կազմվում է լրացուցիչ ծրագիր, որը պետք է ընդգրկի հայցորդի հետազոտությունների ոլորտը կամ գիտության տվյալ բնագավառի ընդհանուր մասնագիտական հարցեր: Լրացուցիչ ծրագիրը մշակվում է համապատասխան ամբիոնում (բաժնում, լաբորատորիայում) և հաստատվում է այն ԲՈՒՀ-ի (ֆակուլտետի), հիմնարկի գիտական խորհրդում, որտեղ ընդունվում է քննությունը:

Այն դեպքերում, երբ հայցորդի բարձրագույն կրթությունը չի համապատասխանում գիտության այն բնագավառին (ենթաբնագավառին), որովհաստատվել է ատենախոսության թեման, հայցորդը պետք է հանձնի լրացուցիչ քննություն ընդհանուր մասնագիտությունից:

3. Քննությունները փիլիսոփայությունից և օտար լեզվից, ինչպես նաև ստուգարքը ինֆորմատիկայից հանձնվում են այն գիտական հիմնարկներում, որոնք ունեն ԲՈՀ-ի թույլտվությունը:

Հիմնարկը ԲՈՀ է ներկայացնում քննություն ընդունող հանձնաժողովի կազմը՝ հաստատման համար:

Հանձնաժողովները հաստատվում են հետևյալ կազմով՝ նախագահ (գիտության դոկտոր կամ թեկնածու) և 2-4 անդամներ:

Քննությունները և ստուգարքը հանձնվում են ԲՈՀ-ի հաստատած ծրագրերով:

4. Որակավորման քննությունները և ստուգարքը կազմակերպվում են տարեկան երկու քննաշրջաններով (մայիս-հունիս և հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին):

---

* *Հաստատված ԲՈՀ-ի 27.06.2000թ., հ. 82 հրամանով, գրանցված ՀՀ Արդարադատության նախարարության կողմից 18.07.2000թ. (հ. 30300065):*

Քննության և ստուգարքի ընթացքում յուրաքանչյուր հայցորդի համար լրացվում է արչանագրություն, որտեղ գրանցվում են քննական հարցերը և քննության վերջնական արդյունքը:

Որակավորման քննությունները գնահատվում են 4 բալային համակարգով՝ «գերազանց», «լավ», «բավարար» և «անբավարար»: Մասնագիտական քննությունը համարվում է հանչնված՝ «գերազանց» կամ «լավ» գնահատականի դեպքում:

Արչանագրությունը ստորագրում են քննական հանչնաժողովի նախագահը և անդամները: Արչանագրությունները պահպանվում են քննություն և ստուգարք ընդունող հիմնարկներում:

Որակավորման քննության և ստուգարքի հանչնման մասին տեղեկանքը տալիս է քննություն, ստուգարք ընդունող հիմնարկը:

5. Որակավորման քննությունը կամ ստուգարքը չհանչնելու դեպքում հայցորդը կարող է այն հանչնել հաջորդ քննաշրջաններում: